18) Պետական Վերահսկողութեան կից կազմւում է յատուկ Խորհուրդ, որի կազմը և իրաւասութիւնը որոշելու է առանձին օրէնքով:

19) Սոյն օրէնքի հաստատմամբ վերացւում են համապատասխան գործող օրէնքներն ու կանոնները:

(Հաստատուած է 1919թ. դեկտ. 30-ին)

Գրագիտական և գրավարժական դասընթացների և ժողովրդական համալսարանների մասին. — 1) Ժողովրդի կրթութեանը նպաստելու համար հիմնւում են՝ ա. անգրագէտ հասակաւորների համար՝ գրագիտական դասընթացներ, բ. թերավարժ հասակաւորների համար՝ գրավարժական դասընթացներ և գ. գրագէտ հասակաւորների համար՝ ժողովրդական համալսարաններ:

2) Գրագիտական և գրավարժական դասընթացներին աւանդւում է հայոց լեզու, գրութիւն և թւաբանութիւն՝ շաբաթն առնւազն չորս օր, ընդամենը վեց ժամ և վեց ամիս տեւողութեամբ: Ժողովրդական համալսարաններում աւանդւում են՝ ա. հայոց պատմութիւն, բ. հայոց գրականութիւն, գ. աշխարհագրութիւն, դ. բնագիտութիւն, ե. հասարակական գիտութիւններ, զ. քաղաքացիական ուսմունք և է. առողջապահութիւն՝—վեց ամիս տեւողութեամբ և շաբաթական երկու ժամ ամէն մի առարկայից:

3) Դասաւանդելիք առարկաների ծաւալն ու ծրագիրը սահմանում է Հանրային Կրթութեան և Արուեստի Նախարարութիւնը:

4) Դասընթացներն ու ժողովրդական համալսարանները ձրի են:

5) Պետական միջոցներով դասընթացներ բանալ կարող են՝ — ա. շրջանային տեսուչները, բ. դպրոցական հոգաբարձութիւնները կամ կոմիտէները, գ. տեղական ինքնավարութիւնները, դ. արհեստակցական միութիւնները և ե. բանւորական խորհուրդները:

Ծանօթ. Հանրային Կրթութեան և Արուեստի Նախարարութիւնը դրամական օժանդակութիւն է ցոյց տալիս մասնաւոր նախաձեռնութեամբ բացւած ժողովրդական համալսարաններին, երբ նրանց գործունէութիւնը օգտակար է գտնում:

6) Յօդւած 5-ի ա. և բ. կէտերում յիշւած դէպքերում դասընթացների պահպանութեան վարկերը բացւում են շրջանային տեսուչների անունով, որոնց առջև համարատու են դասընթացների վարիչները թէ ըստ գործունէութեան և թէ ըստ դրամականի, իսկ վերջին դէպքում՝ վարկը փոխանցւում է ինքնավարութիւններին, որոնք և համարատու են Նախարարութեան առջև:

8) Դասընթացներին կարող են յաճախել ամէն ոք առանց կրօնի, ազգի և սեռի խտրութեան:

9) Դասընթացների և համալսարանների վարիչներին նշանակում են շրջանային տեսուչները կամ ինքնավարութիւնները:

10) Միեւնոյն անձը կարող է միաժամանակ նոյն վայրի գրագիտական և գրավարժական դասընթացների և համալսարանի վարիչ լինել եւ ստանալ երեք վարիչներին յատկացւած վարձատրութիւնը:

(Հաստատուած է 1920թ. յունւ. 5-ին)

Կանոնագիր Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերութեան. — 1) Կարմիր Խաչի Ընկերութիւնը գտնւում է Հայաստանի Կառավարութեան անմիջական հովանաւորութեան տակ: